ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

N 01/9570-2026
«15» մայիս 2026թ.

0046, ՀՀ Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. Հեռ.(374-10) 65-05-53
Էլ. փոստ՝ info@hlib.am

ԿԱՐԳԱԴՐԱԳԻՐ № 0083

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» (ՀՎՀՀ՝ 02606482) ՓԲ, «ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» (ՀՎՀՀ՝ 00471216), «ՎԱԳԱ-ՖԱՐՄ» (ՀՎՀՀ՝ 01536316), «ՌԻԽՏԵՐ-ԼԱՄԲՐՈՆ» Հ/Ձ (ՀՎՀՀ՝ 02542882), «ՍԱՆՈՒՍ» (ՀՎՀՀ՝ 02260313) ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԵԼՈՒ (ՀԵՏԿԱՆՉԻ) ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղերի, կեղծ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի մասին ահազանգի ծանուցման, շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը սահմանելու մասին» թիվ 164-Ն որոշմամբ սահմանված կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետը, 18-րդ, 22-րդ և 26-րդ կետերը, ինչպես նաև «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2026 թվականի մայիսի 15-ին ստացված թիվ 01/2542-26 գրությունը և կից փորձաքննության եզրակացությունը, համաձայն որի՝ Դեղերի եվրոպական գործակալությունը դադարեցնում է լևամիզոլ պարունակող դեղերի կիրառումը՝ հիմք ընդունելով առկա տվյալների ուսումնասիրության արդյունքները, համաձայն որոնց եզրակացվել է, որ լևամիզոլ պարունակող դեղերի օգուտ-վտանգ հարաբերակցությունը այլևս բարենպաստ չէ մեծահասակների և երեխաների մոտ հելմինթոզների բուժման

0047, ՀՀ, ք. Երևան Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am

համար, քանի որ լևամիզոլի կիրառումը կարող է առաջացնել լեյկոէնցեֆալոպաթիա՝ հազվադեպ, սակայն լուրջ կողմնակի ազդեցություն, որը բնութագրվում է գլխուղեղի սպիտակ նյութի ախտահարմամաբ:

ՀՀ առողջապահության նախարարի 2026 թվականի մայիսի 12-ի N 2650-Ա հրամանի համաձայն դադարեցվել է ՀՀ-ում գրանցված ներքոնշյալ դեղերի պետական գրանցումը՝

«Դեկարիս (լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)), դեղահատեր, 50մգ; (2/1x2) բլիստերում (բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող՝ Գեդեոն Ռիխտեր Ռումինիա Ս.Ա., 99-105 Գուզա Վոդա փ.,Տարգու-Մուրես, Մուրես շրջան, 540306, Ռումինիա, բաց թողնման հսկող՝ Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ, գրանցման հավաստագրի իրավատեր՝ Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ Գյոմրոի ճ., 19-21, 1103 Բուդապեշտ, Հունգարիա)»,

«Դեկարիս (լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)), դեղահատեր, 150մգ; (1/1x1) բլիստերում (բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող՝ Գեդեոն Ռիխտեր Ռումինիա Ս.Ա, 99-105 Գուզա Վոդա փ., Տարգու-Մուրես, Մուրես շրջան, 540306, Ռումինիա, բաց թողնման հսկող՝ Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ, գրանցման հավաստագրի իրավատեր՝ Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ Գյոմրոի ճ., 19-21, 1103 Բուդապեշտ, Հունգարիա)»,

«Դեկարիս (լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)), դեղահատեր, 50մգ; (2/1x2) բլիստերում (Գեդեոն Ռիխտեր Ռումինիա Ս.Ա., 99-105 Գուզա Վոդա փ., Տարգու-Մուրես, Մուրես շրջան, 540306, գրանցման հավաստագրի իրավատեր՝ Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ Գյոմրոի ճ., 19-21, 1103 Բուդապեշտ, Հունգարիա)»,

«Դեկարիս (լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)), դեղահատեր, 150մգ; (1/1x1) բլիստերում (Գեդեոն Ռիխտեր Ռումինիա Ս.Ա., 99-105 Գուզա Վոդա փ., Տարգու-Մուրես, Մուրես շրջան, 540306, գրանցման հավաստագրի իրավատեր՝ Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ Գյոմրոի ճ., 19-21, 1103 Բուդապեշտ, Հունգարիա)»:

0047, ՀՀ, ք. Երևան Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65 08 53 էլ. փոստ info@bbb.am
www.bbb.am

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա է արտադրանքի շրջանառության դադարեցման և հետկանչի ենթակա պատճառ հանդիսացող առաջին դասի թերություն (արձանագրվել են ծայրահեղ վնասակար (հրահանգում չնկարագրված) կողմնակի ազդեցության դեպք) անհրաժեշտ է դադարեցնել՝ «Դեկարիս (լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)), դեղահատեր, 50մգ; (2/1x2) բլիստերում», «Դեկարիս (լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)), դեղահատեր, 150մգ; (1/1x1) բլիստերում», «Դեկարիս (լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)), դեղահատեր, 150մգ; (2/1x2) բլիստերում», «Դեկարիս (լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)), դեղահատեր, 50մգ; (1/1x1) բլիստերում» դեղերի F16123G (պիտանիության ժամկետ՝ 06.30.2026), F16123E (պիտանիության ժամկետ՝ 06.30.2026), F16123M (պիտանիության ժամկետ՝ 06.30.2026), F2B242B (պիտանիության ժամկետ՝ 11.30.2027), F34065C (պիտանիության ժամկետ՝ 04.30.2028) F41091D (պիտանիության ժամկետ՝ 01.31.2029), F49127M (պիտանիության ժամկետ՝ 08.31.2029), F19057B (պիտանիության ժամկետ՝ 09.30.2026), F19057C (պիտանիության ժամկետ՝ 09.30.2026), F1A115G (պիտանիության ժամկետ՝ 10.31.2026), F21014D (պիտանիության ժամկետ՝ 01.31.2027), F23049B (պիտանիության ժամկետ՝ 03.31.2027), F23049G (պիտանիության ժամկետ՝ 03.31.2027), F31029A (պիտանիության ժամկետ՝ 01.31.2027), F34063B (պիտանիության ժամկետ՝ 04.30.2028), F34064A (պիտանիության ժամկետ՝ 04.30.2028), F35097A (պիտանիության ժամկետ՝ 05.31.2028), F43174B (պիտանիության ժամկետ՝ 03.31.2029), F48014K (պիտանիության ժամկետ՝ 07.31.2029) սերիաների շրջանառությունը և իրականացնել հետկանչ:

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրության 19-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

0047, ՀՀ, ք. Երևան Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53

Դեղերը ներմուծող «ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Արտաշես Վրեժի Գրիգորյանի, «ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊ ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Վահրամ Պավելի Մակինյանի, «ՍԱՆՈՒՍ» ՍՊ ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Դավիթ Ռոբերտի Սահակյանի, «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲ ընկերությանը՝ ի դեմ տնօրեն Միքայել Վահանի Մացակյանի, «ՌԻԽՏԵՐ-ԼԱՄԲՐՈՆ» Հ/Ձ ՍՊ ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Արմեն Էմիլի Դավթյանի.

1. Սույն կարգադրագիրը ստանալու պահից առավելագույնը 24 ժամվա ընթացքում մշակել «Դեկարիս (լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)), դեղահատեր, 50մգ; (2/1x2) բլիստերում», «Դեկարիս (լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)), դեղահատեր, 150մգ; (1/1x1) բլիստերում», «Դեկարիս (լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)), դեղահատեր, 150մգ; (2/1x2) բլիստերում», «Դեկարիս (լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)), դեղահատեր, 50մգ; (1/1x1) բլիստերում» դեղերի F16123G (պիտանիության ժամկետ՝ 06.30.2026), F16123E (պիտանիության ժամկետ՝ 06.30.2026), F16123M (պիտանիության ժամկետ՝ 06.30.2026), F2B242B (պիտանիության ժամկետ՝ 11.30.2027), F34065C (պիտանիության ժամկետ՝ 04.30.2028) F41091D (պիտանիության ժամկետ՝ 01.31.2029), F49127M (պիտանիության ժամկետ՝ 08.31.2029), F19057B (պիտանիության ժամկետ՝ 09.30.2026), F19057C (պիտանիության ժամկետ՝ 09.30.2026), F1A115G (պիտանիության ժամկետ՝ 10.31.2026), F21014D (պիտանիության ժամկետ՝ 01.31.2027), F23049B (պիտանիության ժամկետ՝ 03.31.2027), F23049G (պիտանիության ժամկետ՝ 03.31.2027), F31029A (պիտանիության ժամկետ՝ 01.31.2027), F34063B (պիտանիության ժամկետ՝ 04.30.2028), F34064A (պիտանիության ժամկետ՝ 04.30.2028), F35097A (պիտանիության ժամկետ՝ 05.31.2028), F43174B (պիտանիության ժամկետ՝ 03.31.2029), F48014K (պիտանիության ժամկետ՝ 07.31.2029) սերիաների հետկանչի պլան և այն համաձայնեցման ներկայացնել Տեսչական մարմին:

2. Համաձայնեցված հետկանչի պլանը ստանալուց հետո մեկօրյա ժամկետում ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ 1-ին կետում նշված դեղերի սերիաների Հայաստանի Հանրապետությունում շրջանառության դադարեցում և հետկանչ:

0047, ՀՀ, ք. Երևան Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 էլ. փոստ info@ihk.am
www.ihk.am

3. Հետկանչի ընթացքի, իրականացված միջոցառումների մասին ամեն օր մեկ անգամ Տեսչական մարմին ներկայացնել հաշվետվություն՝ ՀՀ ք. Երևան Շենգավիթ, Արարատյան 26 և info@hlib.am, pharmacy@hlib.am հասցեներով:

4. Հետկանչի ավարտից հետո դեղի ոչնչացումը իրականացնել «Դեղերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով, 26-րդ հոդվածով և ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի փետրվարի 1-ի «Դեղատներում կամ դեղատնային կրպակներում բժշկական թափոնների հաշվառման կարգը սահմանելու մասին» N 05-Ն հրամանով սահմանված կարգով:

5. Տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետի պարտականությունները կատարող Անժելա Օհանյանին՝

1) ապահովել պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներով համապատասխան տեղեկատվության հրապարակումը,

2) դեղերի շրջանառությունը դադարեցնելու վերաբերյալ կարգադրագիրը արձակելուց հետո՝ նույն օրը, էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել դեղերի շրջանառության բոլոր սուբյեկտներին՝ ներառելով տեղեկատվություն արտադրանքի անվանման, արտադրողի, սերիաների, շրջանառության ժամանակավոր դադարեցման պատճառների վերաբերյալ:

6. Սույն կարգադրագրի կատարման հսկողությունը հանձնարարել Տեսչական մարմնի դեղերի շրջանառության վերահսկողության վարչության պետ-տեսուչի պարտականությունները կատարող Ալինա Քթոյանին:

7. Հետկանչի իրականացման համար Տեսչական մարմնում պատասխանատու նշանակել դեղերի շրջանառության վերահսկողության վարչության գլխավոր տեսուչի ժամանակավոր պաշտոնակատար Անի Քալաշյանին (Հեռ. 077-81-62-25, էլ. հասցե՝ pharmacy@hlib.am, ani.kalashyan@hlib.am_):

8. Սույն կարգադրագիրն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

0047, ՀՀ, ք. Երևան Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374 10) 65 05 53 էլ. փոստ

Սույն կարգադրագիրը ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ակտն ընդունած տեսչական մարմին կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ ՀՀ վարչական դատարան:

Սահմանված կարգով ապահովել սույն կարգադրագրի օրինակի հանձնումը «ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը՝ ք. Երևան, Կենտրոն Ֆիզկուլտուրնիկների փ./8տ. vagapharm@web.am, «ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊ ընկերությանը Արմավիր, Փարաքար, Թաիրով Դեմիրճյան թաղ. 1-ին փ., առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտ 22/1, info@theopharma.am, «ՍԱՆՈՒՍ» ՍՊ ընկերությանը՝ մարզ Արագածոտն, Թալին, Թամանցիների փողոց տ./13 sanus-llc@mail.ru, «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲ ընկերությանը՝ ք. Երևան, Շենգավիթ, Շիրակի փ. 1/ 68, «ՌԻԽՏԵՐ-ԼԱՄԲՐՈՆ» Հ/Ձ ՍՊ ընկերությանը՝ ք. Երևան, Ղ. Փարպեցի /22/14 շին. հասցեներով:

Recoverable Signature

X

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN SLAVIK 3807890461

ՍԱՐԳՍՅԱՆ

0047, ՀՀ, ք. Երևան Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 69-05-53 Էլ. փոստ info@shis.am
www.shis.am
Թեմ. հեռ՝ 8107

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

N 01/9405-2026
«14» մայիս 2026թ.

0046, ՀՀ Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. Հեռ.(374-10) 65-05-53
Էլ. փոստ՝ info@hlib.am

ԿԱՐԳԱԴՐԱԳԻՐ № 0084

«ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» (ՀՎՀՀ՝ 00471216),«ՎԱԳԱ-ՖԱՐՄ» (ՀՎՀՀ՝ 01536316), «ԱԿԱԷՄ» (ՀՎՀՀ՝ 02862942) ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԵՂԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԵԼՈՒ (ՀԵՏԿԱՆՉԻ) ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղերի, կեղծ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի մասին ահազանգի ծանուցման, շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը սահմանելու մասին» թիվ 164-Ն որոշմամբ սահմանված կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետը, 18-րդ, 22-րդ և 26-րդ կետերը, ինչպես նաև «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2026 թվականի մայիսի 13-ին ստացված թիվ 01/2487-26 գրությունը և կից փորձաքննության եզրակացությունը, համաձայն որի՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը տեղեկացնում է Իռլանդիայի բժշկական արտադրանքների կարգավորման մարմնի կողմից «Օմնիպաք (յոհեքսոլ) ներարկման, 350մգ յոդ/մլ, պլաստիկե սրվակներ 100մլ (10)», (արտադրող՝ ԳԵ Հելթքեր գրանցման հավաստագրի իրավատեր՝ ԳԵ Հելթքեյր, Նորվեգիա) դեղի՝ 17.21.23

0046, ՀՀ, ք. Երևան Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am

(պիտանիության ժամկետ՝ 31.08.2028թ.), 17323704 (պիտանիության ժամկետ՝ 31.08.2028թ.), 17425028 (պիտանիության ժամկետ՝31.12.2028թ.) սերիաների հետկանչ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա է արտադրանքի շրջանառության դադարեցման և հետկանչի ենթակա պատճառ հանդիսացող առաջին դասի թերություն (ներարկման դեղը ենթարկվել է աղտոտման) անհրաժեշտ է դադարեցնել «Օմնիպաք (յոհեքսոլ), լուծույթ ներարկման, 350մգ յոդ/մլ, պլաստիկե սրվակներ 100մլ (10)», (արտադրող՝ ԳԵ Հելթքեյր, գրանցման հավաստագրի իրավատեր՝ ԳԵ Հելթքեյր, Նորվեգիա) դեղի դեղի՝ 17277315 (պիտանիության ժամկետ՝ 31.08.2028թ.), 17323704 (պիտանիության ժամկետ՝ 31.08.2028թ.), 17425028 (պիտանիության ժամկետ՝ 31.12.2028թ.) սերիաների շրջանառությունը և իրականացնել հետկանչ:

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրության 19-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

Դեղը ներմուծող «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Էդուարդ Վաչագանի Փոթոյանի, «ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Արտաշես Վրեժի Գրիգորյանի, «ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊ ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Վահրամ Պավելի Մակինյանի.

1. Սույն կարգադրագիրը ստանալու պահից առավելագույնը 24 ժամվա ընթացքում մշակել «Օմնիպաք (յոհեքսոլ), լուծույթ ներարկման, 350մգ յոդ/մլ, պլաստիկե սրվակներ 100մլ (10)», (արտադրող՝ ԳԵ Հելթքեյր, գրանցման հավաստագրի իրավատեր՝ ԳԵ Հելթքեյր, Նորվեգիա) դեղի դեղի՝ 17277315 (պիտանիության ժամկետ՝ 31.08.2028թ.), 17323704 (պիտանիության ժամկետ՝ 31.08.2028թ.), 17425028 (պիտանիության ժամկետ՝

0046, ՀՀ, ք. Երևան Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 էլ. փոստ info@blib.am
www.blib.am

31.12.2028թ.) սերիաների հետկանչի պլան և այն համաձայնեցման ներկայացնել Տեսչական մարմին:

2. Համաձայնեցված հետկանչի պլանը ստանալուց հետո մեկօրյա ժամկետում ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ 1-ին կետում նշված դեղի սերիաների Հայաստանի Հանրապետությունում շրջանառության դադարեցում և հետկանչ:

3. Հետկանչի ընթացքի, իրականացված միջոցառումների մասին ամեն օր մեկ անգամ Տեսչական մարմին ներկայացնել հաշվետվություն՝ ՀՀ ք. Երևան Շենգավիթ, Արարատյան 26 և info@hlib.am, pharmacy@hlib.am հասցեներով:

4. Հետկանչի ավարտից հետո դեղի ոչնչացումը իրականացնել «Դեղերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով, 26-րդ հոդվածով և ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի փետրվարի 1-ի «Դեղատներում կամ դեղատնային կրպակներում բժշկական թափոնների հաշվառման կարգը սահմանելու մասին» N 05-Ն հրամանով սահմանված կարգով:

5. Տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետի պարտականությունները կատարող Անժելա Օհանյանին՝

1) ապահովել պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներով համապատասխան տեղեկատվության հրապարակումը,

2) դեղի շրջանառությունը դադարեցնելու վերաբերյալ կարգադրագիրը արձակելուց հետո՝ նույն օրը, էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել դեղերի շրջանառության բոլոր սուբյեկտներին՝ ներառելով տեղեկատվություն արտադրանքի անվանման, արտադրողի, սերիաների, շրջանառության ժամանակավոր դադարեցման պատճառների վերաբերյալ:

6. Սույն կարգադրագրի կատարման հսկողությունը հանձնարարել Տեսչական մարմնի դեղերի շրջանառության վերահսկողության վարչության պետ-տեսուչի պարտականությունները կատարող Ալինա Քթոյանին:

0046, ՀՀ, ք. Երևան Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 էլ. փոստ info@hlib.am

7. Հետկանչի իրականացման համար Տեսչական մարմնում պատասխանատու նշանակել դեղերի շրջանառության վերահսկողության վարչության գլխավոր տեսուչի ժամանակավոր պաշտոնակատար Անի Քալաշյանին (Հեռ. 077-81-62-25, էլ. հասցե՝ pharmacy@hlib.am, ani.kalashyan@hlib.am):

8. Սույն կարգադրագիրն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Սույն կարգադրագիրը ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ակտն ընդունած տեսչական մարմին կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ ՀՀ վարչական դատարան:

Սահմանված կարգով ապահովել սույն կարգադրագրի օրինակի հանձնումը «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը՝ Երևան, Կենտրոն, Աբովյան փ. 23, «ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը՝ ք. Երևան, Կենտրոն Ֆիզկուլտուրնիկների փ./8տ. vagapharm@web.am, «ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊ ընկերությանը Արմավիր, Փարաքար, Թաիրով Դեմիրճյան թաղ. 1-ին փ., առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտ 22/1, info@theopharma.am հասցեներով:

Recoverable Signature

X

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN SLAVIK 38078904[illegible]

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

0046, ՀՀ, ք. Երևան Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-08-53 Էլ. փոստ [illegible]
www.hlib.am